ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

N 233 -Ա

„22" հունիսի 2026թ.

ք.Արտաշատ

ԳԵՎՈՐԳ ԲԱԲԱՅԱՆԻՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԱՅՆԹԱՊԻ Բ.ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 2 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հանրակրթության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի, 31-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի մարտի 2-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության վարչատնտեսական մասի համակարգողի նշանակման կարգը հաստատելու մասին» թիվ 259-Ն որոշմամբ հաստատված կարգի 11-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի մոտ 2026 թվականի հունիսի 22-ին Գևորգ Բաբայանի հետ անցկացրած հարցազրույցը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Գևորգ Բաբայանին 2026 թվականի հունիսի 25-ից նշանակել «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այնթապի Բ. Մարգարյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգող՝ նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր հինգ տարի ժամկետով:

2. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությանը և Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել և անցկացնել «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Այնթապի Բ. Մարգարյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի հանձնման–ընդունման աշխատանքները:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Восстановимая подпись

X

ՍԵԴՐԱԿ ԹԵՎՈՆՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: TEVONYAN SEDRAK 2602900826 Ս. ԹԵՎՈՆՅԱՆ